ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

10.05.2017թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 51/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ԳԲԽ-51/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի 20.04.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-51/17 բողոք) և կից փաստաթղթերը, «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), պարզեց հետևյալը.

1. **<u>«Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.04.2017թ. ներկայացրած բողոքով Խորհրդին է ներկայացրել Ընկերության վճարման հանձնարարագիրը և արձանագրությունները՝ վիճարկելով վճարման հանձնարարագրի լրացման կարգի հիման վրա Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը խնդրել է չեղյալ հայտարարել «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին մերժելու մասին «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18 ապրիլի 2017թ. որոշումը:

Ընկերությունը մեջբերել է Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը և Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը:

2. Վանաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) 25.04.2017թ.-ին թիվ 02/04.1/1668-17 Պատվիրատուին ուղղված գրությամբ խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան վերոհիշյալ գրությանը՝ Պատվիրատուն 26.04.2017թ-ի թիվ 079/3314-26 գրությամբ հայտնել է, որ համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով բաց ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն:

Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացվել է Կենտրոնի թեժ գծին ներկայացված ահազանգի վերաբերյալ 14.04.2017թ.-ի արձանագրությունը: Հիմք ընդունելով 14.04.2017թ.-ի արձանագրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն գրությանը կից ներկայացրել է նաև «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. ԳԲԽ-51/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-51/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 13-րդ կետի համաձայն՝ «արժույթը (բառերով և կոդով)» դաշտում պարտադիր լրացվում է արժույթը:

3. «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված վճարման հանձնարարգրի 13-րդ կետում նշված չէ արժույթի կոդը:

4. «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2017թ. թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

5. Կենտրոնի թեժ գծին 14.04.2017թ. ժամը 14:56-ին ստացվել է ահազանգ: Ահազանգողը հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնային առաջարկով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վճարման պահանջագրի մեջ 13-րդ տողը թերի է լրացված՝ նշված չէ կոդը /AMD/: Նույն ահազանգով Ահազանգողը խնդրել է մերժել «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը:

6. Ի պատասխան Կենտրոնի 14.04.2017թ. ժամը 14:56-ին ստացված ահազանգի՝ Պատվիրատուն 18.04.2017թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2017թ-ի ժամը 10:00-ի տեղի ունեցած նիստի ժամանակ որոշել է մերժել «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի կողմից 14.04.2017թ. ստացված արձանագրությունը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Նույն կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ ***հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն:

«ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2017թ. թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին հաղթող է ճանաչել 65.000.000 ՀՀ դրամ գնային առաջարկով:

Ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 13-րդ կետի համաձայն՝ «արժույթը (բառերով և/կամ կոդով)» դաշտում պարտադիր լրացվում է արժույթը: «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված վճարման հանձնարարգրի 13-րդ կետում նշված չէ արժույթի կոդը:

Կենտրոնի թեժ գծին 14.04.2017թ. ժամը 14:56-ին ստացված ահազանգով՝ ազանգողը հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնային առաջարկով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վճարման պահանջագրի մեջ 13-րդ տողը թերի է լրացված՝ նշված չէ կոդը /AMD/:

«ՀՀ ԼՄՎՔ ԲԸԱՇՁԲ 17/43» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2017թ-ի ժամը 10:00-ի տեղի ունեցած նիստի ժամանակ որոշել է մերժել «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը, հիմք ընդունելով՝ «Գնումների աջակցման կենտրեն» ՊՈԱԿ-ի՝ գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի կողմից 14.04.2017թ. ստացված արձանագրությունը:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. N 667-Ն հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնության և դրան կից՝ ***վճարման պահանջագրի*** ձևով:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ արժույթը (բառերով և կոդով) լրացնելը պարտադիր է:

Ուսումնասիրելով «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի հայտը՝ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը հրավերով սահմանված պայմաններին (դրա համար նախատեսված լրացման կարգին) չհամապատասխանելու, մասնավորապես՝ տուժանքի ապահովմանը կից ներկայացվող վճարման պահանջագրում արժույթը (բառերով և կոդով գրված) չնշելու հիմքով, պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերով սահմանված պահանջները, քանի որ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացրել է Ընթացակարգի հրավերով սահմանված ***«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ով սահմանված դրույթների անհամապատասխան, մասնավորապես*** վճարման պահանջագրի պարտադիր լրացման ենթակա վավերապայմաններ հանդիսացող գումարը դաշտում չի նշել արժույթը՝ ***կոդով գրված***:

Անհրաժեշտ է նշել, որ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-54/16 և ԳԲԽ-57/16 բողոքները քննող հանձնաժողովների, նույն փաստական հանգամանքներով՝ գտել է, որ վճարման պահանջագրի պարտադիր լրացման ենթակա վավերապայման հանդիսացող «գումարը» դաշտում արժույթը կոդով չնշելը, հանդիսանում է բավարար հիմք՝ հայտը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից 20.04.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Արմինե Նամալյան**